



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 23 ՆՈՅԵՄԲԵՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

Առսկա 8, 9

ՀՐԱԻԷՐ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Իմաստութիւնը կ'աղաղակէ եւ հանճարը կը ձայնակցի:
Անիկա բարձր տեղերու եւ շաւիղներու վրայ կը կենայ:
Ո՛վ մարդիկ, ձեզ կը կանչեմ.
տգէտներ, իմաստութիւն սորվեցէ՛ք,
ո՛վ անմիտներ, ուշադրութիւն ըրէ՛ք:
Լսեցէ՛ք, որովհետեւ ազնիւ բաներ պիտի խօսիմ:
Խրատ առէ՛ք եւ ոչ թէ արծաթ:
Ընտիր ոսկիէն աւելի գիտութիւն սիրեցէ՛ք:
Որովհետեւ իմաստութիւնը գոհարներէն աղէկ է,
եւ ոեւէ մէկ բան չի կրնար անոր հաւասարիլ:
Ես եմ իմաստութիւնը եւ կը բնակիմ խոհականութեան մէջ:
Տիրոջը վախը կը նշանակէ,
ատել չարութիւնը, հպարտութիւնը,
ամբարտաւանութիւնը ու չար ընթացքը:
Խորհուրդը եւ խոհականութիւնը,
հանճարն ու գօրութիւնը իմս են:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,
ի նստիլ ի Կան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 1:18-31)



ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԾՈՅ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ (1:18-31)

Ներկայացնել էքք, թե համայնքէն ներս պառակտումներ կան, խումբերու բաժնուած, Պօղոս Առաքեալ իր միտքը կը շարունակէ, եւ որովհետեւ ըստ երեւոյթին հարցերէն մէկը իմաստութեան ու գործութեան հետ կապուած հարցեր էին, եւ անմիջապէս կ'անցնի խօսելու խաչի մասին, որովհետեւ Առաքեալի քարոզութեան իսկ միջուկն է: Որովհետեւ այդ խաչով է որ իրենք գրան արդարութիւն, սրբութիւն եւ փրկութիւն: Այդ քարոզութեամբ է որ զԱստուած ճանչցան եւ Աստուծոյ կամքը՝ իմաստութիւնը: Խորքին մէջ նիւթի անկում չէ, որքան նիւթին շարունակութիւնը, ու մանաւանդ՝ ընդլայնումը: Ահա թէ ինչու Պօղոս Առաքեալ Աւերարանը քարոզեց պարզութեամբ, առանց խօսքի ճարտարութեամբ:

«**Խաչին մասին քարոզութիւնը յիմարութիւն կը թուի կորուստի ճամբուն մէջ գրնուողներուն համար, մինչ մեզի՝ փրկութեան ճամբուն մէջ եղողներուն համար Աստուծոյ գործութիւնն է անիկա**» (18 հմր): Այո, հաւարքէն հեռու եղող մարդուն համար անհասկնալի, ու մանաւանդ յիմարութիւն կը թուի խաչին մասին քարոզութիւնը: Որովհետեւ այդպիսիներուն համար այն ինչ որ խելքի պառակելիք չէ, ուրեմն յիմարութիւն է: Մանաւանդ՝ Աստուծոյ մարդանալը, կոյսէ մը ծնիլը, անարգ մահով մեռնիլը, եւ այս բոլորը մարդոց փրկութեան համար: Տակաւին, Անոր յարութիւնը, աշակերպներուն երեւնալը, եւ ապա համբարնալը եւ վերստին գալը: Առաւել եւս, խաչին մասին քարոզութիւնը պիտի բերէ այնպիսի սկզբունքներ, այնպիսի կեանքի ձեւ, որ հակառակ է շնչաւոր մարդու սկզբունքներուն. հեզութիւն, ժուժկալութիւն, թշնամին սիրել, բարիք ընել զինք հալածողներուն, անփառասիրութիւն, որոնք իրապէս «յիմարութիւն» են աշխարհի մարդուն համար, բայց խորքին մէջ Աստուծոյ գործութիւնն են, որովհետեւ գործութիւն պէք է այդպիսին ըլլալու:

Իսկ փրկութեան ճամբուն մէջ եղողներուն համար, այսինքն՝ հաւարացեալներուն, որոնք մտած են փրկութեան ճամբան, զիրենք պիտի առաջնորդէ, եթէ չշեղին անկէ, հասնելու վերջնական փրկութեան: Այսպիսիներուն համար Աստուծմէ պրուած գործութիւն է, որ կրնան յաղթել չարին:

Այսպէս Պօղոս Առաքեալ նաեւ կը մէջբերէ Եսայի մարգարէութենէն խօսք մը, որ ցոյց կու տայ թէ ինչպէս Իսրայէլացիք կը փորձէին Երուսաղէմը ազատել Ասորական տիրապետութենէն դիւանագիտութեամբ, փոխանակ Աստուծոյ ապաւինելով: Նոյնպէս ալ այսպէս, կարծէք կ'ուզէին հասկնալ Աստուծոյ ծրագիրը իրենց սահմանափակ խելքով փոխանակ հաւարալու:

«**Որովհետեւ աշխարհը իր ունեցած իմաստութեամբ չկրցաւ ճանչնալ զԱստուած եւ անոր իմաստութիւնը, ուստի Աստուած ուզեց յիմարութիւն համարուած խաչին քարոզութեամբ փրկել անոնք՝ որ կը հաւարան**» (21 հմր): Այո, աշխարհը իր ունեցած իմաստութեամբ չկրցաւ ճանչնալ զԱստուած ու Անոր ծրագիրը: Որքան ալ անոնք ունին առածներ, իմաստուն խօսքեր, ճշմարտութիւնները փրամաքանելու կերպեր, բայց այդ բոլորը պարզապէս մարդկային մտքի ծնունդ են: Անոնց մէջ կան շահասիրական, փառասիրական, եսասիրական դիտումներ: Մարդկային միտքը միայն կրնայ հասկնալ ու ճանչնալ այն օրէնքները որոնց կը համապատասխանէն իր խորհելու եւ փրամաքանելու կարողութիւնը: Միտքը կրնայ հասկնալ ու ըմբռնել միայն քրիստոսեանի քրիստոսը: Տակաւին, աշխարհի ունեցած իմաստութիւնը ոչ թէ անբաւարար է զԱստուած ճանչնալու, այլեւ արգելք իր եւ Աստուծոյ միջեւ:

«**Թէպէտ Հրեաներ հրաշք կ'ուզեն, իսկ Յոյներ իմաստութիւն կը փնտռեն, մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք, որ գայթակղութիւն է Հրեաներուն եւ յիմարութիւն՝ հեթանոսներուն, թէպէտ նոյն այդ Հրեաներէն ու Յոյներէն կանչուածներուն եւ դարձի եկողներուն համար՝ անիկա Քրիստոսն է, Աստուծոյ գործութիւնը եւ իմաստութիւնը**» (22-24 հմր): Աւերարաններէն զիտենք, որ Հրեաներ միշտ ալ հրաշք կ'ուզէին, որուն համար ալ Քրիստոս իբրեւ նշան Յովնան մարգարէին նշանը փրուաւ: Իսկ Յոյներու պարագային Աւերարանը ընդունելու համար անոր մէջ իմաստասիրական դրոյթիւն կ'ուզէին փնտռել, փաստեր, խօսքի ճարտարութիւն, համոզումներ:

Իսկ ինչո՞ր գայթակղութիւն էր հրեային համար: Որովհետեւ հրեաներ կը սպասէին յաղթական Մեսիայի գալուստին, որ պիտի գայ վերահաստատելու Դաւիթի թագաւորութիւնը: Բայց Քրիստոս եկաւ խաչուեցաւ: Որովհետեւ խաչուիլը արդէն տկարութեան նշան էր, իսկ խաչը՝ անարգանք: Տա-

կախին, Հին Կրակարանին մէջ ալ գրուած էր «Անիծեալ ըլլայ ան, որ փայտէն կը կախուի» (Բ Օր 21:23): ուրեմն, ինչպէս ընդունիլ Տէր եւ Փրկիչը, մէկը որ ինքզինք չի կրցաւ փրկել: Նոյնպէս յիմարութիւն կը թուի խաչի քարոզութիւնը, ինչ որ բանականութեան հակառակ: Բայց նոյն այս մարդոց Աստուած նաեւ ընտրեց մարդիկ, որոնք հաւաքով ընդառաջեցին այդ հրաւերին:

«Եղբայրներ, դուք ձեզմէ դարեցեք. ինչ էիք երբ Աստուած ձեզ կանչեց: Ձեզմէ քանի՞ն իմաստուն, հզօր կամ ազնուատոհմ էին մարդկային չափանիշներով: Բայց Աստուած ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը յիմար կը սեպէ, անով իմաստունները ամօթով ձգելու համար. ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը փկար կը համարէ, անով հզօրները ամօցնելու համար» (26-28 հմր): Խաչին գօրութիւնը գործնականապէս Կորնթացիներուն կեանքը փոխակերպեց: Անոնք կ'ապրէին անբարոյ ընկերութեան մը մէջ, ամէն տեսակարժանապատուութիւն եւ արժանաւորութիւն կորսնցուցած, եւ ահա խաչին միջոցաւ ճանչցան Աստուծոյ ընծայած փրկութեան շնորհքը, առանց ոեւէ պայմանի: Եւ հաւաքով անոր ընդառաջումը պարճառ եղաւ որ իրենց կեանքերը փոխակերպուին, իմաստ ու նպատակ ունենան, ու մանաւանդ հարստանան Քրիստոսով: Ինչ որ աշխարհիկ իմաստութիւնը կամ իմաստասիրութիւնը չէր կրցած փայլ, Քրիստոս փրկուաւ յիմարութիւն նկատուած խաչով: Ինչ որ նիւթական հարստութիւնը կամ բարօրութիւնը չէր կրցած փայլ, Քրիստոս փրկուաւ անարգութիւն նկատուած խաչով:

«Որպէսզի ոեւէ մարդ չպարծենայ Աստուծոյ առջեւ, որովհետեւ Աստուած ինքն էր որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց, եւ մենք Քրիստոսով ճանչցանք Աստուծոյ իմաստութիւնը եւ գրանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը, որպէսզի "ով որ պիտի պարծենայ՝ թող Տիրոջնով պարծենայ" (Եբեմ 9:24)» (29-31 հմր): Աստուած դիմամբ այս ձեւը որդեգրեց: Չընտրեց մարդոց մէջ իմաստուն, դիրքով գօրաւոր, կարողութիւններով օժտուած մարդիկ, այլ ընդհակառակը՝ զրկուած, փկար, արհամարհուած, անով պատասխան փայլու համար սնափառութեամբ բռնուած աշխարհիկ:

Տակաւին, Աստուած այս ձեւը որդեգրելով ուզեց անտեղի ու անմիտ պարծանքը խափանել, իբրեւ մեծագոյն չարիք, որ հպարտութիւնն է: Ահա նոյնպէս ալ Կորնթոսի եկեղեցւոյ անդամները աշխարհի յիմարութեամբ բռնուած էին պարծենալով իրենց առաւելութիւններով, մինչդէռ Աստուծոյ հայելիին դիմաց իրենք անկատար, եւ խորքին մէջ պարծենալիք բան մը չունին: Ուստի ինչ որ են ոչ իրենց արժանիքովը, այլ Աստուծոյ շնորհքով, իբրեւ ձրի պարգեւ: Աստուած ինք է որ արժանի կը սեպէ Քրիստոսի միանալու, արքայութեան ժառանգակից դառնալու: Աստուած ինք է որ կը լուսաւորէ զիրենք Քրիստոսով, որպէսզի հասկնան Աստուծոյ փրկութեան ծրագիրը: Աստուած ինք է որ զիրենք արդարացուց, իր Որդիին արիւնով, սրբեց իրենց մեղքերէն եւ փրկութեան առաջնորդեց, որպէսզի ճանչնան ու հասկնան՝ թէ ճշմարիտ իմաստութիւնը, արդարութիւնը, սրբութիւնն ու փրկութիւնը մարդկային միջոցներով չէ որ ձեռք կը բերուին, այլ Աստուծոյ կը պատկանին եւ միայն Աստուծոյ խաչով կը շնորհուին մարդուն: Ուստի, պարծանքի միակ առարկան Քրիստոսի խաչն է եւ Աստուծոյ անունը: Ամէն բարիքներու աղբիւրը Աստուած ինք է: Մենք մեր արժանիքով, մեր կարողութեամբ ոչ մէկ գերբնական առաւելութիւն կրնանք ձեռք ձգել: Մեր արժանիքով ոչ կրնանք Աստուծոյ հաճոյ ըլլալ եւ ոչ ալ կրնանք մենք զմեզ փրկել: Այլ մենք միայն կրնանք, եւ այդ ալ Աստուծոյ շնորհիւ, ընդունիլ այն ինչ որ Աստուած կու տայ Յիսուս Քրիստոսով:

Արդարութիւն ըսելով կը նշանակէ արդարացում, այսինքն՝ մեղքերու քաւութիւն: Արդարացումը բարոյական վիճակ մըն է, որ հիմնուած է հաւաքի վրայ (Հռոմ 3:42): Սրբութիւնը, արդարութեան հոգեկան դէպի կատարելութիւն յառաջընթացութիւնն է: Իսկ փրկութիւնը, հոգեկան կատարելութեան յառաջընթացութեան վերջնական վիճակը:

Հետեւաբար, Աւետարանի քարոզութիւնը կամ խաչի քարոզութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ կողմէ փրկուած մեզի փրկիչ մը, որուն կենաքը, գործերը, պարգամները, գօրութիւնը, սրբութիւնը, իմաստութիւնը եւ սէրը ինքնին կը գրաւեն մարդու սիրտն ու հոգին ու վստահութիւն:

Աւետարանի կոչը կը փկարանայ երբ քարոզիչը շեշտը կը դնէ միտքին ու բանականութեան վրայ, եւ կը մոռնայ ուղղելու սիրտին, խղճին ու կամքին: Որովհետեւ մարդը ամբողջութիւն մըն է որ կը խորհի, կը կամենայ ու կը սիրէ: